DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate


236

Թիւ 2032
Ապրիլ 13, 1995

Արժանաշնորհ
Տ. Ընձակ Քհնյ. Նալպանտեան
Հովիւ Ս. Համբարձում Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Թրամպըլ.

Սիրելի Տէր Ընձակ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 25, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 5, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Կէրի Տոնոյեան
Ճարին Տ'Ուրսօ
Ռիչըրտ Գալֆայեան
Գիմ Գասպարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ, համաձայն Թեմական Կանոնադրութեան, Տարեկան Անդամական Ժողովին ներկայացուած Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է պատրաստուի եւ ստորագրուի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ


630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558